ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Հեղափոխության լեգենդար հերոս, լենինյան գվարդիայի հավատարիմ զինվոր Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյան, 1872—1922) ծննդյան 90-ամյակին էր նվիրված մայիսի 29-ին Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում կայացած համատեղ հանդիսավոր նիստը, որը կազմակերպել էին ՀԿԿ քաղաքային կոմիտեն և ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղը։ Այստեղ էին հավաքվել մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, Անդրկովկասի հեղափոխական շարժման մասնակիցներ, գիտության, գրականության ու կուլտուրայի գործիչներ։

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց ՀԿԿ քաղկոմի առաջին քարտուղար Լ. Պ. Զարիբջանյանը։ Նա նշեց Կամոյի անսահման նվիրվածությունը կոմունիստական կուսակցությանն ու Լենինի մեծ գործին։ Իր պարզ, հմայիչ ու անմիջական բնավորությամբ, հարուստ ներաշխարհով Կամոն ժամանակին արժանացել է Լենինի ու նրա զինակիցների բարձր վստահությանը։ Աշխատելով ու գործելով ընդհատակի պայմաններում, պրոֆեսիոնալ հեղափոխական Կամոն կուսակցական պատասխանատու հանձնարարությունները կատարել է արտակարգ խիզախությամբ ու բարձր կարգապահությամբ։

Կամոյի կյանքի և հեղափոխական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Կ. Լ. Դալլաքյանը։ Կամոյի կյանքը հեղափոխության փոթորիկներում ծնված մի լեգենդ է, իրական հեքիաթ, ասաց նա։ Վեց ձերբակալություն, 13 տարի տառապանքներ բանտերում և ոստիկանական զնդաններում, հինգ վերք՝ բարիկադային կռիվներում և պարտիզանական մարտերում, մահվան դատավճիռ, տասնյակ տարիներով տաժանակրության և բանտարկության դատապարտվածություն. ահա Կամոյի խիզախումներով լի կյանքի համառոտ թվարկումը։

1901 թ. 19-ամյա Կամոն, զինվորագրվելով կոմունիստական կուսակցությանը, Թիֆլիսի կոմիտեի հանձնարարությամբ կուսակցական պատասխանատու հանձնարարություններ կատարելիս բացառիկ խիզախություն է հանդես բերել։ «Դժվարությամբ էին հավատում,— գրել է Մ. Գորկին,— որ մարդն ունակ լիներ իր մեջ համարությամբ մի խումբ հեղափոխականների հետ մարձակությունը աշխատանքում անփոփոխ հաջողության հետ և աննման հավատարմությունը հոգու մանկական պարզության հետ»։

1903 թ. Կովկասյան միության հանձնարարությամբ մի խումբ հեղափոխականների հետ Կամոն կազմակերպում է Թիֆլիսի կոմիտեի տպարանը, ապա՝ Կովկասյան միության Հավքարի տպարանը և ամբողջովին նվիրվում մարքս-լենինյան գրականության հրատարակման ու տարածման գործին։

Հեղափոխության մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի հետ անմիջական ծանոթությունը խոշոր իրադարձություն էր Կամոյի կյանքում, Լենինի հետ ունեցած զրույցները հեղափոխության, կոնսպիրատիվ աշխատանքի, կուսակցության խնդիրների մասին մի ամբողջ դպրոց էին Կամոյի համար։ «Ես հիմնավոր կերպով ճանաչում եմ մի ընկերոջ որպես միանգամայն բացառիկ նվիրվածության, խիզախության և եռանդի տեր մարդու»,— այսպես է բնութագրել Վ. Ի. Լենինը Կամոյին։

1906—1912 թթ. Կամոյի հեղափոխական գործունեությունը կապված էր արտասահմանի հետ. նա եղել է եվրոպական մի շարք երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Իտալիայում, Սկանդինավյան երկրներում, Բալկաններում, Թուրքիայում և այլուր, կապեր հաստատել տեղի սոցիալ-դեմոկրատների հետ, մեծ աշխատանք կատարել հեղափոխության ջոկատների համար զենք և զինամթերք ձեռք բերելու ուղղությամբ։ Բանտն ու աքսորը չթուլացրին նրա հոգու արիությունն ու եռանդը։ Հեղափոխության տարեգրության մեջ առմիշտ գրվեց գրեթե մարդկային ուժերից վեր նրա հերոսությունը բեռլինյան բանտում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կամոն իր ամբողջ ուժն ու եռանդը նվիրաբերեց Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման ու ամրապնդման գործին։

Կամոյի ստեղծագործական հմտությունները, արտակարգ խիզախությունը, երկաթյա կամքը, բարձր կարգապահությունը, անսահման նվիրվածությունը կոմունիստական կուսակցու-

թյանն ու մեծ Լենինի գործին կոմունիզմ կառուցող երիտասարդ սերնդի դաստիարակության համար ոգեշնչման ու խիզախումների անսպառ աղբյուր են։

* * *

Հունիսի 12-ին Մոսկվայում, ՍՍՀՄ հեղափոխության Լենինի շքանշանակիր կենտրոնական թանգարանում, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Կամոյի ծննդյան 90-ամյակին։

Հանդիսավոր նիստին ներկա էին հեղափոխական շարժման վետերաններ, գիտնականներ, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անդամ Ա. Միկոյանը, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը, Մոսկվայում Հայկական ՍՍՀ մշտական ներկայացուցիչ Ս. Մելքումյանը, հին բոլշևիկներ։

Նիստը բացեց թանգարանի գիտական քարտուղար Խ. Կասպերանսկին։ Կամոյի կյանքի և հեղափոխական գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը։ Այնուհետև Կամոյի մասին իրենց հուշերով հանդես եկան Ի. Պալախաձեն, Ա. Միկոյանը, Ա. Լիտվեյկոն։

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

* * *

1972 թ. մարտի 20—25-ը Լենինգրադի Պետական էրմիտաժում կայացավ ակադ. Հ. Օրբելու հիշատակին նվիրված կոնֆերանս՝ «Մերձավոր Արևելք. Կովկաս, Միջին Ասիա. մշակույթների փոխադարձ կապի պրոբլեմը միջնադարում» թեմայով։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին Սովետական Միության տարբեր քաղաքներից ժամանած բազմաթիվ մասնագետներ, որոնք զեկուցումներ կարդացին ճարտարապետության, գրականության, արձանագրագիտության, կնքագիտության, տնտեսական և առևտրական կապերի, մշակութային փոխհարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք այս կամ այն չափով հանդիսացել են Հ. Օրբելու նախասիրությունների առարկան։

Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց էրմիտաժի դիրեկտոր, ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին։ Նա մանրամասն ու հանգամանալից խոսեց էրմիտաժում արևելագիտության ստեղծման ու զարգացման, այդ գործում Հ. Օրբելու խաղացած մեծ դերի մասին։

Ստորև համառոտակի կթվարկենք կոնֆերանսի մասնակիցների զեկուցումներում առաջ քաշված հարցերը։

Ի. Մարշակը (Լենինգրադ) «Սասանյան տորևտիկայի դպրոցներից մեկի մասին» զեկուցման մեջ ուսումնասիրության առարկա էր դարձրել սասանյան շրջանի արծաթե անոթների պատկերագրությունը։ Ելակետ ունենալով Հ. Օրբելու կարծիքը այն մասին, որ խնդրո առարկա անոթները չի կարելի վերագրել միասնական ոճի զարգացման տարբեր էտապների, այլ պետք է համարել տարբեր դպրոցների ոճի արդյունք, Ի. Մարշակը կանգ առավ այդ դպրոցներից մեկի արտադրանքի նմուշների՝ որսի տեսարաններով ափսեների (III—VI դդ.) վրա։

Տ. Իզմայլովայի (Լենինգրադ) «Անիի 1298 թ. պատկերազարդ ձեռագիրը» վերնագիրը կրող զեկուցումը նվիրված էր Եղբայրիկ անունով գրչի արտագրած և ծաղկող Խաչատուրի կողմից պատկերազարդված ավետարանին (Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք, № B 44)։ Համեմատության մեջ դնելով նրա մի շարք մանրանկարները Մատենադարանի № 4052 ձեռագրի (Արճեշ, 1303 թ.) մանրանկարների հետ, նա գալիս է այն եզրակացության, որ Խաչատուրը Արճեշի դպրության կենտրոնից էր և, աշխատելով Անիում, կրել է քաղաքային միջավայրի ազդեցությունը։

Է. Կորխմազյանի (Երևան, Մատենադարան) զեկուցումը կրում էր «XIV—XV դդ. Ղրիմում աշխատած հայ մանրանկարիչների արվեստի մասին» վերնագիրը։ Համառոտակի կանգ առնելով Ղրիմի հայ գաղութի պատմության վրա, զեկուցողը ցույց տվեց, որ ազգային դարավոր ավանդույթներին հետևող հայ մանրանկարիչները տեղում կրեցին նոր միջավայրի, նոր հարևանների՝ հույների և իտալացիների արվեստի ու մշակույթի որոշակի ազդեցությունը։

Մ. Դոռնլիկը (Մոսկվա) «XII—XIII դդ. մերձավորարևելյան և միջինարևելյան մանրանկարչության պատկերագրության ծագման մի քանի հարցեր» զեկուցման մեջ խոսեց մուսուլմանական մանրանկարչության մեջ մարդու պատկերման մասին։

Օ. Գալերկինան (Լենինգրադ) հանդես եկավ «Մանրանկարչության Հերաթի և Մավերաննահրի (միջինասիական) դպրոցների փոխադարձ կապերի մասին» թեմայով և ցույց տվեց, որ XV դ. հերաթյան մանրանկարչությունը, որը արևելյան միջնադարի գեղարվեստական մշակույթի գերագույն նվաճումների համադրությունն էր, XVI դ. ևս շարունակում էր հսկայական ազդեցություն ունենալ սահմանակից երկրների, այդ

թվում նաև Մավերաննախրի նկարչության զարգացման վրա։

Ս. Խան-Մագոմեդովը (Մոսկվա) իր «Դաղստանյան լաբիրինթոսները» զեկուցման մեջ ուսումնասիրության առարկա էր դարձրել քարերի, դրամների վրա գծագրված, դրոշմված լաբիրինթոսները, նրանց սիմվոլիկ, պաշտամունքային, գործնական և օրնամենտալ նշանակությունը, վերլուծության ենթարկելով նաև նրանց երկրաչափական յուրահատկությունները։

Ա. Իվանովը (Լենինգրադ) «Կուբաչիի բարձրաքանդակները, նրանց պատմությունը և ուսումնասիրության հեռանկարները» վերնագիրը կրող զեկուցման մեջ նշեց, որ դեռևս 1938 թ. Հ. Օրբելին առաջ էր քաշել Դաղստանի X—XIV դդ. թվագրվող խնդրո առարկա բարձրաքանդակների՝ Աղվանքի արվեստի հետ ունեցած սերտ կապի հարցը։ Առաջնային խնդիր համարելով նշված բարձրաքանդակների ճիշտ թվագրման անհրաժեշտությունը, զեկուցողը նշեց նաև դրանց վրա իրանական, անգամ չինական ազդեցության առկայությունը։

Վ. Վորոնինան (Մոսկվա), որի զեկուցման թեման էր՝ «Ինժեներական մտքի զարգացումը Միջին Ասիայում», խոսեց ժամանակակից Իրանի, Աֆղանստանի և Միջին Ասիայի տարածքի վրա ապրող ժողովուրդների միջնադարյան շինարարական ընդհանուր ավանդույթների մասին, ցույց տվեց, որ շինարարական տեխնիկայի զարգացման ընդհանուր տենդենցները չէին բացասում տեղական դպրոցների հանդես գալուն, որոնք բարձր զարգացման հասան Խորասանում, Մավերաննախրում և այլուր։

Ռ. Պուզաչենկովայի (Տաշքենդ) «Միջինասիական խանակաների ճարտարապետական տիպոլոգիայի շուրջը» թեմայով զեկուցումը նվիրված էր հիմնականում սուֆիզմի զարգացման հետ կապված խանակաների՝ դերվիշների ասպընջականոցների Միջին Արևելքում հանդես գալու հարցին։

Ի. Բորոդինան (Մոսկվա) «IX—XII դդ. միջինասիական և իրանական մզկիթների կոմպոզիցիոն յուրահատկությունները» զեկուցման մեջ նշեց, որ «արարական» հատակագծով կառուցված մզկիթների կողքին գոյություն ունեին միագմբեթ, քառակուսի հատակագծով բազմագմբեթ մզկիթներ և այլն, որոնք չունեն կոմպոզիցիոն-հատակագծային իմաստով իրենց զուգահեռները Իրանի, Ադրբեջանի և Թուրքիայի ճարտարապետության մեջ, ուստի ենթադրվում է, որ ծագել են տեղական հողի վրա՝ շարունակելով նախաիսլամական ժամանակաշրջանի ճարտարապետական ավանդույթները։

Ա. Պրիբիտկովայի (Մոսկվա) զեկուցումը վերնագրված էր՝ «Հյուսիսային Խորասանի ճարտարապետությունը»։ Համեմատելով Հյուսիսային Խորասանի և Իրանի ճարտարապետությունը, նա ցույց տվեց, որ այն ընդհանուր առմամբ ընթացել է նույն հունով։ IX—X դդ. լայն տարածում են գտնում դամբարանները, որոնք ծագում են սասանյան շրջանի չորտակներից։

Հ. Խալվաչյանը (Մոսկվա) «Սանահնի հուշարձանների ուսումնասիրությունը, վերակառուցումը և ճարտարապետական անսամբլի ձևավորման էտապները» զեկուցման մեջ հանգամանորեն կանգ առավ Կյուրիկյանների Տաշիր-Զորագետի թագավորության հիմնադրման պատմության վրա, խոսեց նոր պետության համար Սանահնի հոգևոր և լուսավորական կենտրոն դառնալու պատմության, Սանահնում կրոնական և քաղաքացիական շինարարության, առանձին շինությունների ձևափոխման պատճառների, ճարտարապետների և շինարարության ժամանակագրական հաջորդականության մասին։

Ն. Տոկարսկին (Լենինգրադ) «Ամբերդի ճարտարապետության մի քանի հարցեր» թեմայով զեկուցելիս հանգամանորեն խոսեց դեռևս 1936 թ. Հ. Օրբելու կողմից հնագիտական պեղումների ենթարկված Ամբերդի ճարտարապետական հուշարձանների մասին։

Ս. Կակաբաձեն (Լենինգրադ) իր «Վրաստանի վաղքրիստոնեական ճարտարապետության մի քանի հարցեր» զեկուցման մեջ նշեց, որ Վրաստանում եկեղեցական ճարտարապետության մեջ պաշտամունքային իմաստով գլխավոր նշանակություն ուներ խորանը, որի զարգացումն ընթացել է միախորանից եռախորանը։ Զեկուցողը հիմնականում կանգ առավ խորանի զարգացման էտապների վրա և դրա հիման վրա հարց բարձրացրեց վերանայելու Վրաստանի վաղքրիստոնեական ճարտարապետության թվագրումը։

Գ. Բալաշովան (Լենինգրադ) ելույթ ունեցավ «Նիզամիի պոեմի հերոսներ Ֆարհադն ու Շիրինը Խորասանի նախամոնղոլական շրջանի խեցեղենի վրա» թեմայով, ուր ուսումնասիրության էր ենթարկել 1960 թ. հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված՝ XII—XIII դդ. թվագրվող սափորի էպիկական մոտիվներով պատկերագրությունը։

Ն. Գրաժդանկինայի (Տաշքենդ) զեկուցման թեման էր «Խորեզմի և իրանա-ադրբեջանական խեցեգործների արտադրական կապերը XII դ. և նրանց ազդեցության հետքերը Միջին Ասիայի, Պովոլժյեի և Հյուսիսային Կովկասի ճարտարապետական հախճապակու ձևավորման վրա XV—XVI դդ.»։

Յու. Միլլերը (Լենինգրադ), որի զեկուցումը կրում էր «Խեցեղեն սպասքը ճարտարապետական շինությունների զարդարման մեջ» վերնա-

գիրը, նշեց, որ դեռևս 1911 թ. Հ. Օրբելին, ուսումնասիրելով Բայբերդի միջնաբերդը, շոշափել էր նրա արտաքին պարիսպների երեսպատման համար օգտագործված հախճապակե սալիկների, ափսեների, սկուտեղների և քրեղանների հարցը։ Զեկուցողը դրանց զուգահեռներն է նկատում XII—XIII դդ. հուշարձաններում (Անի, Ամբերդ, Վրաստան, Տիվրիկ, Աքշեհիր)։ Ստեղծված լինելով Առաջավոր Արևելքում, շենքերի զարդարման այդ եղանակը տարածում գտավ բազմաթիվ երկրներում։ Հ. Օրբելին ենթադրել է, որ այդ սալիկները, ափսեները և այլն դրվում էին շենքերի, բերդերի պատերին որպես թալիսմաններ։ Միլլերը, ընդունելով հանդերձ այդ միտքը, գտնում է, որ դրանք ավելի շուտ դեկորատիվ նշանակություն ունեին։

Ռ. Տեր-Ղևոնդյանի (Երևան, ԳԱ պատմության ինստիտուտ) «Ամբերդի արաբական արձանագրությունը» զեկուցման նյութն էր Ամբերդի 1965 թ. հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված արաբական արձանագրությունը, որն ընթերցվում է. «Ամիրսպասալար Զաքարիա և Իվանե Աս-Սուրունի»։ Զեկուցողը գտնում է, որ դա XII դ. վերջի և XIII դ. սկզբի Հայաստանի ու Վրաստանի քաղաքական և ռազմական նշանավոր գործիչներ Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների արձանագրությունն է։ «Աս-Սուրունի» ընթերցումը վերականգնելով «Արծրունի» ձևով, զեկուցողը ցույց տվեց, որ հիշյալ անձնավորությունները մոր կողմից իսկապես Արծրունիներ էին։

Հ. Բարթիկյանը (Երևան, ԳԱ պատմության ինստիտուտ) «Բյուզանդական «Դիդենիս Ակրիտաս» էպոսը և «Սասունցի Դավիթը» վերնագրով զեկուցման մեջ, հենվելով մի շարք փաստերի, այդ թվում և երկու էպոսների քաղաքական տրամագծորեն հակառակ դիրքավորման վրա, խոսեց այն մասին, որ «Դիդենիս Ակրիտասի» և «Սասունցի Դավթի» միջև որևէ աղերս գոյություն չունի։

Վ. Շանդրովսկայան (Լենինգրադ) «Փիլարտոս Վարաժնունու (XI դ.) էրմիտաժում պահվող արճիճե կնիքները» զեկուցման մեջ նշեց, որ էրմիտաժում պահվող բյուզանդական շուրջ 12000 արճիճե կնիքներից մի քանի տասնյակը պատկանում են X—XII դդ. բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայազգի նշանավոր գործիչներին։ Մասնավորապես նա խոսեց XI դ. 70—80-ական թթ. Մարաշում հաստատված իշխան Փիլարտոս Վարաժնունու կնիքների մասին, որոնց վրա նշված են ոչ միայն տիրոջ անունը, այլև տիտղոսները։

Ա. Կակովկինը (Լենինգրադ) հանդես եկավ «Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական արծաթյա իրերի վրա հանդես եկող արևմտյան պատկերագրության տարրերի մասին» թեմայով։ Նշելով խնդրո առարկա իրերի պատկերագրության վրա նկատվող արևմտյան տարրերի վերաբերյալ Հ. Օրբելու և Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքը, հատուկ ուսումնասիրության նյութ էր դարձրել էրմիտաժում պահվող 1293 թ. Սկևռայի մասնատուփի Պողոս առաքյալի դրվագված պատկերը, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի 1334 թ. Սսի ձեռագրի, Մատենադարանի № 7691 ձեռագրի, Երուսաղեմի պատրիարքարանի 1557 թ. Խիզանի ձեռագրի արծաթյա կազմերի պատկերները։

Ա. Նուրիևը (Բաքու) «Աղվանքի տարածքի վրա հայտնաբերված դրսից ներմուծված առարկաներ» վերնագիրը կրող զեկուցման մեջ խոսեց հնագիտական պեղումների ժամանակ Մինգեչաուրում, Թորփաքղլայում, Խընբսլրում, Շերգյախում հայտնաբերված խեցուց, ապակուց, մետաղից, քարից պատրաստված առարկաների, կնիքների, զարդերի մասին, որոնք իր կարծիքով պատրաստվել են սասանյան Իրանում, Մերձավոր ու Միջին Արևելքում և վկայում են այդ երկրների հետ Աղվանքի տնտեսական ու մշակութային սերտ կապերի մասին։

Ռ. Գեյուշևի (Բաքու) համոզմամբ քրիստոնեությունը մուտք է գործել Աղվանք I—II դդ-ում ղազակի Ասորիքից, շրջանցելով Հայաստանը։ Նրա զեկուցումը վերնագրված էր՝ «Աղվանից եկեղեցու կազմակերպման և զարգացման հիմնական էտապները»։ Աղվանքի եկեղեցական կազմակերպության սկիզբը նրա կարծիքով համընկնում է Վաչագանի կողմից Աղուենում գումարված 488 թ. եկեղեցական ժողովի ժամանակին։ VII դ. աղվանից հոգևորականության մեջ իբր առաջանում է երկու հոսանք, որոնցից մեկը հակված էր դեպի Բյուզանդիա և քաղկեդոնականություն, մյուսը՝ դեպի Սասանյանները և միաբնակություն։

Կոնֆերանսում՝ զեկուցումներով հանդես եկան նաև Ի. Օրբելին (Լենինգրադ)՝ «Վրացաոուսական գուգահեռներ XVIII դարի առաջին կեսի պատմագրության մեջ», Ն. Նեզմատովը (Դուշանբե)՝ «Ուստրուշանի արվեստի հուշարձանների մի քանի սյուժեների մասին», Ս. Լունինան (Տաշքենդ)՝ «Միջնադարյան Մերվի մշակութային կապերի մի քանի ասպեկտներ» և Ս. Պեզները (Մոսկվա)՝ «Միջնադարյան Եգիպտոսի մշակութային փոխհարաբերությունների մի քանի հարցեր»։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

* * *

Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահությունը 1969 թ. հուլիսի 31-ին որոշում ընդունեց չորս տարին մեկ անգամ Թորոս Թորամանյանի անվան մրցանակաբաշխություն անցկացնել հայկական ճարտարապետության պատմության հարցերին նվիրված լավագույն ուսումնասիրության համար։ Ըստ այդ որոշման՝ մրցանակաբաշխությունը պետք է նախորդի Թորոս Թորամանյանի հիշատակին նվիրված գիտական նստաշրջան, ուր պետք է զեկուցումներ լսվեն հայ ճարտարապետության պատմությանը վերաբերող խնդիրների շուրջ։

Անդրանիկ նստաշրջանը տեղի ունեցավ այս տարվա մայիսի 23—24-ին։ Այն կազմակերպել էր Հայաստանի ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքը և արվեստի ինստիտուտը։ Բացելով նստաշրջանը ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ծ. Աղայանը նշեց, որ Թորոս Թորամանյանին է պատկանում հայկական ճարտարապետության առաջին ուսումնասիրողի պատիվը։ Նա առաջինն էր, որ գիտականորեն ապացուցեց հայկական ճարտարապետության ինքնատիպությունն ու նրա կազմավորման ակունքները։ Եվ նրա հիշատակին նվիրված նստաշրջանի ու մրցանակի հաստատման փաստը, որ մեծ գիտնականի անգնահատելի վաստակի վկայությունն է, միաժամանակ հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործի կարևորության ճանաչումն է։

Ճարտարապետության դոկտոր Կ. Հովհաննիսյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր «Թորոս Թորամանյանը հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր» թեմային։ Թորոս Թորամանյանից առաջ էլ եղել են հայ ճարտարապետության պատմությանը նվիրված ուսումնասիրություններ, սակայն նրանցում չկա մի ընդհանուր կարծիք՝ խարսխված գիտական խոր ու ճշգրիտ վերլուծության վրա։ Այս իմաստով Թ. Թորամանյանը, Ն. Մառի խոսքերով ասած, իրավամբ ճարտարապետության լեզվի առաջին ուսուցիչն է։ Զեկուցողն անդրադարձավ նաև հուշարձանների վերանորոգմանը վերաբերող մեթոդոլոգիական այն ըսկզբունքներին, որ մշակել ու առաջադրել է Թ. Թորամանյանը իր հնագիտական բազմամյա փորձով՝ սկսած Անիի նշանավոր հետազոտություններից։

Ճարտարապետության դոկտոր Վ. Հարությունյանը (Երևան) «Պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության ետթորամանյանական շրջանը» զեկուցման մեջ հանգամանորեն ներկայացրեց այն լայն ու բազմակողմանի աշխատանքները, որ տարվում են Հայաստանի համապատասխան ինստիտուտներում ու հիմնարկներում։ Անդրադառնալով հայրենական գիտնականների ուսումնասիրություններին, զեկուցողը ընդգծեց, որ դրանք անհամեմատ ընդարձակում են հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության շրջանակները, խորացնում ինչպես ընհանուր, այնպես էլ մասնակի հարցերի ընդգրկումը։

Ճարտարապետության տեսության ու պատմության հարցերի ճիշտ լուսաբանման մեջ ուճերի, ուղղությունների ու փոխազդեցությունների անսխալ գնահատման գործում առաջնահերթ նշանակություն ունի ճարտարապետության պարբերացումը։ Թորոս Թորամանյանը առաջինն է զբաղվել այս խնդրով և դեռևս ներկա դարի առաջին տասնամյակում կազմել է, իսկ հետագայում՝ վերամշակել ու ճշգրտել միջնադարյան հայ ճարտարապետության վերելքների ու անկումների տեսությունը։ Ըստ արժանվույն գնահատելով մեծ գիտնականի երախտիքը, պատմ. գիտ. դոկտոր Կ. Ղաֆադարյանը (Երևան) իր «Հայաստանի ճարտարապետության պատմության պարբերացման հարցի շուրջը» զեկուցման մեջ միաժամանակ նշեց, որ ետթորամանյանական աշխատանքներում թեև կիրառվում են Թ. Թորամանյանի պարբերացման սկզբունքները, բայց և նկատելի են շեղումներ այդ տեսությունից։ Զեկուցողը ընդգծեց, որ անհրաժեշտ է մշակել միասնական մի տեսություն, որն իր մեջ ընդգրկի նախնադարյան, ուրարտական, վաղ հայկական, ինչպես նաև միջնադարյան և ավելի ուշ ժամանակների հուշարձանները՝ իրենց դարաշրջանային հատկանիշներով, հաջորդականության կարգով։

Արվեստագիտության դոկտոր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ն. Տոկարսկին (Լենինգրադ) հանդես եկավ «Ճարտարապետության հազվագյուտ հուշարձան Անիի 1911 թ. պեղումներից» զեկուցումով։ Նա ներկայացրեց հնագիտական 10-րդ գիտարշավի ժամանակ Անիում Աբուլ-Մաամրանի մեծ մինարեթի փլատակների մոտ պեղված եկեղեցու մնացորդները։ Մասնագիտական խոր և մանրազնին ուսումնասիրությամբ մատնանշելով պեղված հուշարձանի ճարտարապետական հորինվածքի առանձնահատուկ գծերը, Ն. Տոկարսկին այն դասում է արդեն V—VI դդ. սահմանագլխին Հայաստանում հայտնի, այսպես կոչված՝ «գմբեթավոր սրահների» շարքը։ Հենվելով որոշ առնչությունների ու նմանությունների վրա (աբսիդների սյունաշարեր, առագաստների բարդ ձևեր, սյուների հիմքերի կողավոր փորագրության սյուժեներ),

որ ունի պեղված հուշարձանը Անիի Գագիկ I-ի տաճարի հետ, զեկուցող համարում է այն ոչ ուշ, քան XI դարի առաջին կեսի կառուցվածք։

Շինարարական տեխնիկայի հարցերի լուսաբանումը նույնպես կապված է Թ. Թորմանյանի հետազոտած հնագույն՝ V—XIV դարերի հուշարձանների հետ։ Գիտնականին է պատկանում այդ պրոբլեմի ուսումնասիրման առաջնությունը։ Ճարտարապետության դոկտոր Հ. Ղալփախչյանի (Մոսկվա) «Հին Հայաստանի շինարարական տեխնիկայի առաջին հետազոտողը» զեկուցման մեջ մանրամասն քննության առնվեցին շինարարական նյութերին, դրանց մշակման ու կիրառման եղանակներին, շինարարական գործիքներին ու կոնստրուկտիվ հնարանքներին վերաբերող հարցերը։

Շինարարական տեխնիկայի հարցերին էր նվիրված ճարտարապետ Յու. Թամանյանի (Երևան) «Ճարտարապետական հուշարձաններում անցյալում օգտագործված և վերականգնման աշխատանքներում կիրառված շինանյութերի առանձնահատկությունները» զեկուցումը։

Ախթամարի պատկերագրական համակարգէ համեմատաբար քիչ ուսումնասիրված 4-րդ դիմաքանդակների և տոհմանշանների գոտու մասին մանրակրկիտ ու ուշագրավ զեկուցում կարդաց ճարտարապետության դոկտոր Ս. Մնացականյանը (Երևան)։ Ժխտելով այն կարծիքը, ըստ որի տվյալ գոտու վրա պատկերված դիմաքանդակները թատերական դիմակներ են, զեկուցողը ցույց տվեց, որ դրանք Արծրունի թագավորական և իշխանական տների ներկայացուցիչների դիմաքանդակներ են։ Հորինվածքների մասնագիտական վերլուծության միջոցով նա հիմնավորեց այդ գոտու առանձնահատուկ դերը տաճարի գեղարվեստական մշակման ամբողջության մեջ։

Վաղ միջնադարի հայկական ճարտարապետության մեջ դրսևորված մոդուլային յուրահատուկ համակարգի առանձնահատկություններին էր նվիրված ճարտարապետության թեկնածու Ա. Սահինյանի (Երևան) «Մոդուլային համակարգը Էջմիածնի Մայր տաճարի V դարի դմբեթակիր կառուցվածքում» զեկուցումը։ Հենվելով Էջմիածնի Մայր տաճարի պեղումներից ստացված նոր նյութերի վրա, զեկուցողը զարգացրեց այն տեսակետը, ըստ որի կենտրոնագմբեթ կառուցվածքների հիմքում ընկած մոդուլային համակարգը Հայաստանում գոյություն է ունեցել առնվազն V դարում։ Հետագայում կառուցողական այս սկզբունքը հանդես է գալիս Հայաստանի, ինչպես և Վրաստանի VI—VII դդ. կենտրոնագմբեթ գրեթե բոլոր կառուցվածքներում։

«Հայաստան V—VII դդ. գմբեթավոր եկեղեցիների նախագծման սկզբունքները» զեկուցման մեջ ճարտարապետության թեկնածու Ա. Երեմյանը (Երևան) նշեց, որ միջնադարյան Հայաստանում գոյություն են ունեցել նախագծման կատարելագործված ու կանոնիկ սկզբունքներ։ Եկեղեցիների նախնական տեսքի վերականգնման ուղղությամբ կատարած իր ուսումնասիրություններից ելնելով, նա առաջադրեց կառուցվածքային մոդուլ, որի շնորհիվ, ունենալով հուշարձանի թեկուզ և ոչ ամբողջական հատակագիծը և ճակատներում մի քանի ծավալների իրական բարձրությունը, հնարավոր է վերականգնել հուշարձանի նախագիծը։

Ճարտարապետության թեկնածու Ա. Զարյանը (Երևան) խոսեց Եվրոպայում հայ ճարտարապետության ուսումնասիրության մասին և հատկապես այն երախտավոր գործի մասին, որ կատարում են Հռոմի և Միլանի ճարտարապետները, որոնցից երկուսի զեկուցումները կարդացվեցին նստաշրջանում։ Ա. Ալպագո-Նովելլոն (Միլան) իր «Թանահատի բազիլիկան և պայտաձև կամարի խնդիրը վաղ միջնադարի հայ ճարտարապետության մեջ» զեկուցումով հաստատում է այն միտքը, որ Թանահատի (V դ.) ճարտարապետական մի շարք հատկանիշներ հնարավորություն են ընձեռում՝ մեկնաբանելու Արևմուտքի վաղ միջնադարի և հատկապես իտալական որոշ հուշարձաններ։ Իսկ Պ. Կունեոն (Հռոմ) նստաշրջանին ներկայացրեց «Վաղ միջնադարի երկու նորահայտ բազիլիկաներ Վասպուրականում» զեկուցումը։ Հուշարձանները հայտնաբերվել են Հռոմի համալսարանի միջնադարյան արվեստների ինստիտուտի մի քանի աշխատակիցների՝ 1970 թ. օգոստոսին պատմական Հայաստան կատարած գիտահետազոտական շրջագայության ժամանակ, Վանա լճի հարավարևմտյան ափերին Թուղ և Փաշվանց գյուղերում։ Մասնագիտական վերլուծության ենթարկելով հուշարձանները, զեկուցողը թվագրեց դրանք V—VI դարերով։

Նստաշրջանի երեք նիստերում լսված 12 զեկուցումները ամփոփեց արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության դոկտոր Ռ. Զարյանը։

Մայիսի 31-ին Զվարթնոց տաճարի ավերակների մոտ տեղի ունեցավ Թ. Թորմանյանի անվան մրցանակաբաշխության առաջին մրցանակակրի՝ արվեստագիտության դոկտոր, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկու մեծարումն ու հուշամեդալի հանձնումը։ Բացելով հանդիսավոր հավաքույթը, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը բարձր գնահատեց հայ ճարտարապետության պատմության մեջ Թ. Թորամանյանի գործն ու վաստակը, որ այսօր դարձել է գիտական գործունեության ուղեցույց և չափա-

նիշ։ Հանձնելով հուշամեդալը Ն. Մ. Տոկարսկուն, նա շնորհավորեց հայ ճարտարապետության անխոնջ հետազոտողին այդ պատվավոր կոչմանն արժանանալու առթիվ։

Այնուհետև Ն. Տոկարսկու գիտական գործունեությանը նվիրված համառոտ զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Առայանը։ Ներկայացնելով ճարտարապետության բնագավառում Ն. Տոկարսկու մատուցած ծառայությունները, զեկուցողն ասաց, որ սկսելով աշխատանքները դեռևս Անիում, Ն. Մառի գլխավորած արշավախմբում, Ն. Տոկարսկին կես դարից ավելի է, ինչ մեկը մյուսի ետևից լույս է ընծայում իր ուսումնասիրությունները՝ նվիրված հայ ճարտարապետության պատմության հանգուցային խնդիրներին, շարունակում է Թ. Թորամանյանի մեծ գործը և իր շուրջը երիտասարդ կադրեր համախմբելով առաջ մղում հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը։

Ն. Մ. Տոկարսկուն ողջունեցին արվեստի ինստիտուտի դիրեկտոր Ռ. Զարյանը, հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Առաքելյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահի տեղակալ Լ. Ջորյանը, ՀԿԿ էջմիածնի շրջկոմի քարտուղար Ռ. Զաքոյանը, ուսուցիչ Հ. Դանղյանը։

Վերջում շնորհակալական խոսք ասաց Թ. Թորամանյանի անվան մրցանակաբաշխության առաջին մրցանակակիր Ն. Տոկարսկին և ԳԱ նախագահությանը հանձնեց Լենինգրադի Պետական էրմիտաժի նվերը՝ Թ. Թորամանյանի երեք գծագրերը։

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ